Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
U-74

891.542-3
Ա-73

Ա. Յ. ԱՍՄԱՆ

ԱՐԻՒՆ

ՔՐԴԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԻՑ

Արտատպած «ՏԱՐԱԶ» Շաբաթաթերթից

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
«ՊԻՇԿԻՆԵԱՆ ԱՐՀԵՍՏԻՑ» ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ
1902

01 JAN 2009
19 NOV 2010
891.99
Ա-74

Ա. Յ. ԱՍՄԱՆ

ԱՐԻՒՆ

Քրդական կեանքից

(Արտատպած «ՏԱՐԱԶ» շաբաթաթերթից)

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՏԻՊ» ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ
ԼԵՇՏՈՒԿՈՎ ՓՈՂՈՑ, Տ. 4.
1902

15.02.2013

Дозволено цензурою. С.-Петербургъ, 21 Сентября 1902 года.

«Пушкинская Скоропечатня», Лештуковъ, 4.

ԱՐԻՒՆ

Նրանք երկու ընկերներ էին՝ մի հողում ծնուած, մի հողում սնուած, մի գեղածիծաղ երկնքի տակ մեծացած:

Քրդական վառ, գիւրաբորբոք, կրակոտ արիւնն էր հոսում նրանց երակների մէջ:

Քիւրդ աշիրաթներից մամկուն ցեղի երկու բարեհամբաւ ծնողաց զաւակներ էին, որ իրանց ծննդավայր գիւղում կատարեալ լռութեան ու երջանկութեան մէջ՝ շնորհիւ այդ երկու ընտանիքների դրկից-հարևանութեան և մերձաւոր բարեկամութեան՝ անցրել էին իրանց մատաղ հասակը միատեղ, սկսած մանկութեան հասակի անմեղ խաղերից մինչև պատանեկական հասակի այդ երազական տարիները:

Մեհրին, գիւղի հարուստ կալուածատէր, ազնուատոհմ յայնի Ահմեդ-աղայի միամօր դուստրը, օջախի, իր ծերացած ծնողների միակ և վերջին յոյսը, այնքան գեղեցիկ էր, որ հէնց տասն տարին չը բոլորած՝ գրաւել իր շրջակայքի բոլոր ջահէլ-ջիւան երի-

տասարդների սիրտն ու հոգին: Քաջ, հարուստ և անուանի երիտասարդներից շատերը նրա վրայ աչք ունէին, շատերը միմեանց բերան էին կրծոտում նրա համար, և, ամէն անգամ, երբ նրանք առիթ էին ունենում տեսնելու այդ չքնաղ աղջկան աւելի հասունացած, աւելի լեցուած ու կոկուած, աւելի ու աւելի ամուր էր տպաւորւում նրանց սրտերում Մեհրիի գեղեցիկ պատկերը, — նրա սևորակ, շողշողուն աչքերի փայլը, որ դուրս էր ժայթքում նշաձև բացուած քնքոյշ կոպերի միջից, նրա սպիտակ, ալ-վարդագոյն շաղախուած գիմագծերը, երկար, սև սաթանման փայլուն, գանգուր հիւսերը, նրա նազուք իրանն ու չքնաղ հասակը:

Ամէնքն էլ այրւում էին նրա սիրով, և չնայած շատ լաւ նկատում էին՝ թէ ո՞րչափ անկեղծ, նոյնիսկ եղբայրական սիրով էին փարւում իրարու Մեհրին ու Բաքիրը, այսուամենայնիւ դեռ ևս չէին յուսահատւում, այլ դեռ մի շարք միջոցներ էին ծրագրում այդ չքնաղ աղջկայ սիրտն ու սէրը և նրա ծնողաց համաձայնութիւնը գրաւելու համար: Ամէնքն էլ յուսով սպասում էին, որ աղջիկը փոքր ինչ աւելի հասունանար և այնպէս այնուհետև գործին որոշ ընթացք տային — պարզապէս նրա ձեռքը խնդրէին:

Իսկ աղջիկը քանի գնում, այնքան աւելի ու աւելի լեցւում, կոկւում էր և հրճուանքով լցնում բոլորի սիրտը:

Սակայն հէնց այդ մօտ ժամանակներում մի այսպիսի դէպք պատահեց:

Բաքիրի հայրը, ծերունի Հասան-բէգը, որ վաղուց արդէն նկատել էր իր որդու և Մեհրիի սիրային յարաբերութիւնները, այժմ արդէն ընկած լինելով մահուան անկողնի մէջ, ցաւելով, որ չի կարողանալու իր կենդանութեան ժամանակ նրանց ուրախութիւնը տեսնել, իրանց սրտի փափագը կատարել և ցանկանալով գոնէ իր մահուանից յետոյ նրանց իրանց մուրազին հասցնել հաստատապէս, որ գոնէ իրան էլ այդ գործում մի ողորմատեղի մնար, ինչպէս ասում են, իր մահուանից մի օր առաջ, դժբաղդաբար արդէն ուշ, իր մօտ հրաւիրեց իր հին և ամենամօտերիմ բարեկամին՝ Ահմեդ-աղային և երբ նրանք երկուսը միասին մենակ մնացին, դարձաւ և ասաց նրան հանդարտութեամբ.

— Էհ, բարեկամ, մարդս մահկանացու է, մի օր պիտի մեռնի. ես զգում եմ, որ մօտեցել է իմ օրհասական ժամը, ուստի, քեզ, որպէս իմ հին և ամենամօտերիմ բարեկամիս, ես այսօր կանչեցի ինձ մօտ վերջին կամքս յայտնելու և վերջին խնդիրքս անելու, որ յուսով եմ չպիտի մերժես կատարել:

— Միամիտ կաց, բէգ, քո կամքը սուրբ է ինձ համար... խօսեց Ահմեդ-աղան մեղմաղձոտ ձայնով, անկեղծաբար տխրելով իր սիրելի բարեկամի մօտալուտ մահուան համար:

— Հա՜... շարունակեց բէգը — վաղուց նկատած լինելով մեր Բափրի և ձեր Մէհրիի դէպի իրար տածած անկեղծ սէրը, որի համար և սրտանց ուրախ էի, ահա այսօր ես պիտի խնդրէի քեզանից աղջկաս ձեռքը իմ սիրելի Բափրի համար. բայց... բա՜յց...

Բէգը մի վայրկեան ընդհատեց իր խօսքը և ապա շարունակեց այսպէս.

— Բայց որպէսզի ես բռնացած չը լինեմ իմ որդու ազատ իրաւունքների վրայ, ես միայն խնդրում եմ, որ հէնց որ Բափրս ինքը կառաջարկի այդ քեզ, դու չը մերժես, իսկ ես հաստատ գիտեմ, որ նա կանէ այդ, որովհետև որքան նկատել եմ՝ նա միայն և միայն ձեր աղջկայ վրայ աչք ունի.... Այժմ ինձ ուրիշ ոչինչ չի մնում, բայց եթէ միայն քո համաձայնութիւնն ստանալ և հանդիստ սրտով մեռնել... խօսք տալի՞ս ես այս կամքս և խնդիրքս կատարելու, թէ ոչ:

Տիրեց բոպէական լռութիւն: Ահմեդ-աղան մի բոպէ լաւ խորհելուց յետոյ միայն պատասխանեց.

— Արդէն ասացի, որ քո կամքը սուրբ է ինձ համար, բէգ, ինչպէս կամենաս... ես ազնիւ խօսք եմ տալիս քեզ, կատարել ցանկութիւնդ, այդ կողմից միտիտ կայ այլ ես:

— Շնորհակալ եմ, — ասաց բէգը և այլ ես հարցը վճռած համարելով՝ լռեց:

Սակայն այդ խորհուրդը երկու բարեկամների

մէջ կատարուեց և մնաց այնքան ծածուկ, որ տան մէջ անդամ ոչ ոք չիմացաւ բանի էութիւնը:

Նոյն իսկ ինքը՝ Բափրը ոչինչ չհասկացաւ:

Բայց այնուհետև Ահմեդ-աղան պարզապէս սկսեց առաջուանից աւելի քաղցր աչքով նայել Բափրի վրայ:

Այդ բանը շուտով նկատեցին երիտասարդները և շատերը աւելի բարձրաձայն համարեցին այլ ևս բոլորովին յետ կանգնել իրանց մտադրութիւններից, այնուհետև ամէն ջանք ու ճիգ աւելորդ համարելով: Բայց եղան և այնպիսիները, որոնք հաստատ մնացին իրանց վճռի մէջ և ուխտեցին իրանք-իրանց, որ անպատճառ ձեռք բերեն Մէհրիին՝ ինչ միջոցով էլ որ լինի, թէկուզ բռնութեամբ: Այդպիսիներից պարզապէս սկսեց արեան հոտ փչել:

Մէհրիի այդ ախտաբորբոք սիրահարները, որոնց մէջ մանաւանդ աչքի էր ընկնում՝ հարեան գիւղից, Մամաշ յեղի մէջ յայտնի դիրք և անուն ունեցող Ռահիմ-բէգի որդի՝ Սուլթ անունով քաջ երիտասարդը, որ երբեմն աւազակի հռչակ էլ էր վայելում, նոյն իսկ առաջարկութիւն արին Ահմեդ-աղային, որ համաձայնի աղջիկը իրանց կնութեան տալ, սպառնալով հակառակ դէպքում փախցնել նրան, բայց Ահմեդ-աղան հաստատ մնաց իր արդէն հանդուցեալ բարեկամին տուած խոստմանը՝ արհամարհելով նրանց բոլոր սպառնալիքները:

Մեհրիի ձեռքը այլ ևս Բափրին էր պատկանում, չը նայած ինքը՝ Բափրը եղելութիւնից դեռ ոչինչ տեղեկութիւն չունէր. և ոչ իսկ Մեհրին որևէ բան գիտէր:

*
* *

Բայց ո՞վ էր Բափրը...

Նա, հանգուցեալ բէգի երեք որդիներից ամենից փոքրը, կրտսերը, իր ցեղի մէջ ամենից վայելչադէմ, խելօք, ճարպիկ ու իգիթ (քաջ) երիտասարդներից մէկն էր: Դեռ ևս 18—20 տարեկան հաղիւ լինէր, բայց իր քաջութեան, անվեհերութեան համբաւը արդէն ամեն տեղ արձագանգ էր տալիս, ամեն կողմից գովում, փառաբանում էին նրա քաջութիւնն ու ճարպիկութիւնը, իսկ իր գեղեցկութեան, առնական հուժկու յատկութիւնների ու հասակի առաջ արդէն խունկ էին ծխում մի քանի գեղեցիկ, մատաղ քրդուհիներ, որոնց ծնողներն անգամ յոյս ունէին նրան իրանց փեսայ դարձնելու՝ քաղցը աչքով, յարդանքով ու համակրանքով նայելով վրան: Սակայն այն բոլոր հրապոյրները, որ գործ էին դրւում նրա սիրտը շահելու համար, մաղաչափ անգամ ազդեցութիւն չէին ունենում նրա վրայ: Նա անյողդողդ էր դէպի իր սիրոյ, միակ սիրոյ առարկան: Մանկութիւնից սի-

րել էր Մեհրիին, սիրում էր այժմ էլ ամենաջերմ սիրով և, պիտի սիրէր յաւիտեան—այդպէս էր վճռել նա և այդպէս էլ ուխտել:

Սիրում էին նրանք երկուսն էլ միմեանց:

Դեռ ևս մանկութեան զւարթ ու անմեղ տարիների մէջ քանի՞-քանի՞ անգամներ նրանց շրթունքները մրմնջացել էին իրարու՝ սիրոյ քնքոյշ, բայց կրակոտ արտայայտութեամբ սրտի խորքերից բղխած խօսքերը, որոնց սովորաբար յաջորդել են անմեղ գրկախառնութիւնները, հրեշտակային, պարզ ու հիասքանչ, թովչական համբոյրները:

— Դո՛ւ, Բափրի ջա՛ն, ինձ ընդ միշտ կը սիրես, այնպէս չէ՞: Հարցնում էր յաճախ Մեհրին իր սրտակցին, իր ընկերակցին:

— Քեզ համար, հոգի՛ս, կեանքս էլ չեմ խնայիլ, միայն թէ դու երջանիկ ու բաղդաւոր լինել կարողանաս.— պատասխանում էր սովորաբար Բափրը և ապա քնքշութեամբ շոյելով Մեհրիի կակուղ մետաքսանման գանգուրներով ծածկւած գլուխը, աւելացնում էր.—իսկ դո՛ւ, անգի՛նա,խօսք տալի՞ս ես, որ ինձնից բացի ուրիշի չսիրես, ուրիշի հետ չապրես:

Սակայն այդ փափուկ հարցին այլ ևս խօսքով չէր պատասխանում Մեհրին, այլ ուղղակի ձեռքը մեկնում էր, գցում էր ընկերի ճտոմը և իր նուրբ-քնքոյշ շրթները մօտեցնում նրա ճակատին և, որպէս կարօտակէզ քոյրը կը համբուրէր իր եղբօրը երկա-

բառեւ պանդխտութիւնից վերադառնալու ժամին, — այդպէս իր շրթունքներով հպում եւ շոշափում էր Բափրի ճակատը, կարծես դրանով ուզում էր ասել նրան.

— Դէ՛հ, համոզի՛ր...

— Օ՜, անդի՛նս, ես կապացուցեմ, թէ ինքս որչափ սիրում եմ քեզ եւ թէ որչափ արժանի եմ քո փոխադարձ սիրոյն. — վրայ էր տալիս պատանին եւ կրկին անմեղ հաճոյքով դրկախառնում նրան։

Եւ այդպէս անցնում էին օրեր, ամիսներ, եւ նրանք լուռ անձնատուր էին լինում իրանց անմեղ հաճոյքներին՝ սպասելով այն ցանկալի օրին, երբ Բափրը արդէն կարող կը լինէր պարզապէս Մեհրիի ձեռքը խնդրել. սպասում էին սրտատրոփ այն երջանիկ օրին, որ պիտի միաւորէր, երջանկացնէր նրանց յաւիտեան։ Եւ ահա մի արկած, մի նոզկալի դէպք սակայն անսպասելի կերպով բոլորովին բերեց-մոտեցրեց այդ երջանիկ օրը. մի դէպք, որտեղ պատանի քիւրդը ապացուցեց ասպետական քաջութեամբ՝ թէ որքան սիրում էր ինքը Մեհրիին, որ կեանքն էլ չէր խնայում նրա համար, նրա պատուի համար, որով վերջնականապէս վճռուեց նրանց բախտն ու երջանկութիւնը։

* * *

Գարնանային սիրուն ու թովիչ օրերից մէկում, երբ բնութիւնն ի ցոյց էր դրել իր ամբողջ վեհութիւնը արեգակի ոսկի ճառագայթների տակ, մի խումբ մատաղահաս, մէկը միւսից աւելի գեղեցիկ քրդուհիներ իջել էին դաշտը, բնութեան զրկում մի փոքր ժամանակ աւելի ազատ շունչ քաշելու եւ զարճանալու իրանց շրջապատի պարզ, բայց հիանալի տեսարաններով։

Դաշտը, կամ գիւղի այդ հարթավայրը նմանում էր մի մեծ, երկար ձգուած, բայց և ընդարձակ հրապարակի, այն տարբերութեամբ միայն, որ այստեղը այժմ ծածկուած էր դալար, նորաբողբոջ կանաչով-խոտերով ու ծաղիկներով։ Այստեղ սովորաբար իջնում էր գիւղի հասարակութիւնը զարճանալու համար. այդտեղ գիւղի երիտասարդները սովորաբար ձիարշաւներ, մարդանքներ ու քէֆեր էին անում, քէֆի և ուրախութեան մէջ մեռցնելով ազատ ժամանակը։ Ահա այդ դաշտավայրի մի կողմի վրայ ձգում, տարածւում էր արհեստական անտառակը, միւս կողմից կից ունենալով ոչ շատ խիտ, բայց պտղալից և բարերեր այգիներ. անտառակի հակառակ կողմը բարձրանում էր մի փոքրիկ բլուր, որի վրայից

էին անցկենում հաղորդակցութեան բոլոր ճանապարհները, իսկ չորրորդ կողմում կանգնած էր գիւղը արթուն պահապանի նման։ Իսկ այդ պարփակուած հարթավայրի միջով հեզիկ-նազիկ սահելով ոլորապտոյտ անցնում էր գետը, որի ջրերի մեղմիկ վշշոցը միախառնելով մօտիկ անտառակի սօսափիւնի և զեփիւռի շշուկի հետ՝ առաջացնում էր նուագների ու մեղեդիների մի կատարեալ նուագահանդէս, որը ակամայ դէպի իրան էր գրաւում ամէն մէկին, այդտեղ, բնութեան այդ վեհ ծոցում՝ մոռանալու իր առօրեայ վշտերն ու հոգսերը։

Հիանալի տեսարան...!

Ահա այդտեղ, այդ հեղասահ գետակի թաւուտ եզերքում, կէսօրից յետոյ, գարնան թովիչ արևի ոսկեճաճանչ ճառագայթների տակ նազաքայլ ճեմում էին մտադրահաս քրդուհիները, իրանց սրտի զարդերը իրար պատմելով, իրանց՝ յոյսերով լի, վառ տենչերով զեղուն սիրտ իրար առաջ բանալով։ Կարծես գիւղական պարզ ու պաճոյճ բնութիւնը ազդած լինէր նրանց մատաղ սրտերի վրայ, այնպէս նրանք պարզ սրտով պատմում էին իրարու իրանց ամէն մի նոյն իսկ յիմարութեան աստիճանի փոքր ու բարդը, այնպէս անկեղծութեամբ հաւատում էին իրարու իրանց նոյն իսկ խորհրդաւոր գաղտնիքները։ Իսկ այդ միջոցին նրանց վառվռուն, հուրհրատող, ուրախ դէմ-

քերի վրայ կարծես դրոշմուած էին միմիայն անկեղծութեան ու անմեղութեան նշանները։

Այդ խմբի մէջն էր և գեղեցիկ Մեհրին, որը իր քաղցրախօս լեզուով, իր կատակաբան ոճերով, ձևերով գրաւում էր ամենքի ուշադրութիւնն իր վրայ։ Այդ աղջիկը իրան այնպէս էր ցոյց տալիս, կարծես աշխարհ էր եկել միայն ուրախութեան համար։

Եւ ահա այժմ իր բոլոր ընկերուհիներն էլ կարծես ներշնչուած նրա ուրախ տրամադրութիւնից, իրանք էլ ուրախ-զուարթ կատակներ էին անում միմեանց հետ և իրանց ուրախ քրքչոցով լցնում հրապարակը, ուր իրանցից բացի, ուրիշ ոչ ոք չէր երևում։

Նրանք ուրախ էին. բայց յանկարծ այդ ուրախութիւնը փոխուեց մի ընդհանուր երկիւղի և զարմանքի, երբ յանկարծակի այգիների միջից ճիշտ նրանց դիմաց դուրս եկան երեք անծանօթ ձիաւոր երիտասարդներ։

Առաջին վայրկեանում շփոթուած, իրարով անցած աղջիկներից և ոչ մէկը չը կարողացաւ ճանաչել՝ թէ ովքեր էին դրանք, բայց հէնց որ սկսեցին երկիւղից և մասամբ էլ անծանօթութիւնից դրդուած միմեանց քուիշ տալով, հրելով, փախչել դէպի գիւղը, Մեհրին մի անգամ էլ նայեց յետև և ճանաչելով մի անգամ էլ արդէն իրան փախցնել փորձող երի-

տասարդին, ծնկները թուլացան, տեղնուտեղը մնաց գամուած և միայն կարողացաւ արտասանել՝

—Ա՜հ, քոյրիկնե՛ր, փրկեցէ՛ք ինձ, այդ նա է, աւազակ Սուլօն... ազատեցէ՛ք ինձ...

—Մեհրի, ի՞նչ ես ասում... ի՞նչ պատահեց քեզ.—շշնջացին միւս աղջիկները և իրանք էլ յետ նայեցին, բայց ի՞նչ տեսնեն լա՜ւ... երեք ձիաւորները համեհաս ընկել էին իրանց յետևից անդադար մտրակելով ամեհի ձիաններին:

Եւ սրտապատառ աղջիկները թողնելով Մեհ-րիին, իրանց գլուխը զերծելու համար փորձեցին աւելի արագ դէպի առաջ վազել, դէպի գիւղը, հա-ւա՜ր կանչելու:

—Անգութնե՜ր... ու՞ր էք թողնում ինձ... նա ինձ կը տանի.. .ազատեցէք...յուսահատաբար ձեռ-ները ծնկներին խփելով ճչում էր Մեհրին լացակու-մած և ընդհատ ձայնով. և ճիգն էր թափում տեղից շարժուելու, փախչելու, բայց ո՞րտեղից. վախից խեղ-ճի ոտները չորացել ու թուլացել էին:

—Ա՜խ, Փեարի՛, Մարջա՛ն, Զինեա՛թ, օգնեցէ՛ք, ազատեցէք ինձ.—միայն այդքանը կարողանում էր ճչալ իր ընկերուհիների յետևից:

Նրա ձայնը սուր էր, թափանցիկ, երերուն, իսկ ինքը արդէն գողդողում էր ամբողջ կազմուածքով և ատամները սրթսրթացնում:

Ընկերուհիները լսելով այդ յուսակտուր ճիչերը, ճի՛չ, որ արդարև յուսահատ սրտից միայն կարող էր դուրս ժայթքել,—վերջապէս արգահատանքով լցւե-ցան, զգացուեցին և, չը նայած դեռ բաւական երկար ճանապարհ ունէին մինչև գիւղը, այնուամենայնիւ քիչ սրտապնդելով յետ դարձան Մեհրիին գրկելու, փախցնելու, ազատելու համար, բայց արդէն ուշ էր, արդէն ձիաւորները վրայ էին տուել և նրանցից եր-կարահասակ, թխադէմ հուժկու մէկը արդէն բռնել էր ուշաթափ աղջկայ անզօր բազկից ու աշխատում էր բարձրացնել ձիու վրայ, գիրկն առնել, փախցնել:

Քրդուհիները խորը զգացւելով այդ նողկալի տեսարանից՝ սարսափահար ճչալով սկսեցին «հաւա՜ր, հաւա՜ր» կանչել և համեհաս գիւղին լուր տանել:

—Մեհրիին փախցրին, տարա՜ն, հաւա՜ր....

Թնդաց մի րոպէում ողջ գիւղը և վրէժխնդրութեան կայծերով վառուած մարդիկ դուրս թափւեցին դաշտը հաւարի հանելու, այդ անորգանքի վրէժը լուծե-լու, իրանց պատիւն ու թասիբը պաշտպանելու համար:

—Բայց ախար ո՞վքեր փախցրին... ու՞ր տա-րան,—տեղացին բազմաթիւ հարցեր բօթաբեր աղջիկների գլխին:

— Աւազակ Սուլօն...

— Կրկին նա՜... այդ անզգամը... ա՜յ, ա՜յ, ա՜յ, նրա... ո՞ր կողմը տարան...

— Այդիներից դուրս եկան... կարծեմ բլուրը բարձրացան...

Եւ այլևս կատարեալ վրէժխնդրութեամբ լցած ամբոխը յական թօթափել զինուեցաւ ու որը ոտքով, որը ձիով, փութով դէպի փախստականները դիմեցին:

* * *

Պատիւը և մանաւանդ ցեղի թասիրը խիստ թանդ արժէ քիւրդի համար. նա ամէն բան կը զոհէ, միայն թէ այդ երկու սրբազան մենաշնորհները անձեռնմխելի մնան. ուստի ամբոխը այս դէպքում այդպէս յուզելու, փրփրելու իրաւունք ունէր. ի՞նչպէս կարելի էր, որ մի օտար աղայ գայ և իրանց միջից օրը ցերեկով աղջիկ փախցնէ, տանէ...

Դժբաղդաբար այս անպատուութեան բօթաբերը լուրը աւելի ուշ հասաւ նրանց, որոնց իսկապէս պէտք էր:

Բափրը որսի գնալու պատրաստութեան վրայ էր, և հէնց նոր ախոռատնում զբաղուած էր նժոյգը թամբելով, որ նրան եղելութեան մասին լուր բերին, և նա այլևս իրան կորցրած, ամբողջովին կրակ կարած՝ հաղիւ կարողացաւ թռչել սենեակը, վերցնել հրացան ու փամփուշտները և կրկին վերադառ-

նալով դռան միմիայն չուլել իր դեղեցիկ նժոյգը, և ահա կայծակի արագութեամբ դուրս թռաւ դաշտը:

Այդպէս նա յուսահատ մոլեղնութեամբ ճեղքեց իրան առաջից գնացող հետիոտն ամբոխը և քիչ յետոյ էլ մի քանի ձիաւորներից բաղկացած խումբը՝ դոռում-դոչիւնով պացաւ դէպի բլուրը: Ձիաւոր խումբը նկատելով այդ, արագացրեց ձիաների թափը և հետևեց նրան:

Փախստականները բլուրն արդէն անցել էին և մի նեղ ձորակի միջով տենդային արագութեամբ փախչում էին, երբ իրանց յետևից լսեցին միաժամանակ մի քանի հրանօթների բոմբիւնը:

Հետապնդողները արդէն մօտեցել էին. բոպէն կրիտիկական էր:

Բափրը՝ աչքերը կրակ կարած՝ սոսկալի արագութեամբ թռչում էր, պանում դէպի աւազակները, ձեռքում ճօճելով լցրած պատրաստ հրացանը:

Փախստականներից մէկը զգուշութեամբ զրկած լինելով իր թանդագին օրսը, չէր էլ մտածում ինքնապաշտպանութեան համար զէնք բանեցնելու վրայ. իսկ իր հաւատարիմ միւս երկու ընկերները արդէն պատրաստ էին դիմադրելու հետապնդողներին, որոնք շուտով բոլորովին մօտեցան:

Երկու կողմից էլ որոտացին հրացանները և

1006
29191

վզզալով-տզզալով մլեցեան գնդակները նպատակից հեռու, խոնաւ գետնի մէջ:

Հետապնդողները վրայ տուեցին իրանց հետ կռուող երկու աւազակների վրայ, իսկ ինքը՝ Բաֆրը մոլեգնութեամբ սլացաւ դէպի աւազակապետ Սու-լօն, որի գրկումն էր իր անմահ Մեհրին, իր հոգու հատոր հուրի-փերին: Նկատելով որ գնդակը կա-րող է նպատակից շեղուել, մի փոքր շարժում միայն, և ահա կարող էր իր պաշտած էակի արդէն մարած կեանքը յաւիտեան խաւարել, նա բարւոք համարեց հրացանն ուր նետել. և ահա իր սայրասուր դա-շոյնը մերկացնելով, նա յարձակուեց ձեռքով պաշտ-պանել ուզող աւազակի ուսից, մի ձեռքով բռնեց, և միւս ձեռքով մինչև երախակալը մխեց պողպա-տը նրա ձախ կողը, ուղիղ սրտի մօտ:

Սուլօն կորցնելով հաւասարակշռութիւնը, այլ և չկարողանալով դիմանալ մահաբեր խոցին, յուսա-հատաբար մի վայրենի ճիչ արձակեց և արնակոլոր տապալուեց գետին, իր հետ տանելով և ուշաթափ աղջկան:

— Վա՜յ, վա՜յ... գետնին բաղխելով սթափուեց և ճչաց Մեհրին և... կրկին մարեց, մի վայրկեան շուրջը դիտելուց յետոյ:

— Ջա՜ն, ջա՜ն... անդրադարձրեց Բաֆրը և ցած թռչելով իր ձիուց, ոտքով նախ դէն հրեց արեան մէջ թաւալող Սուլօյին և ապա իր գիրկն առնելով

խեղճ աղջկան, անձնատուր եղաւ նրան ուշքի բերե-լու միջոցներին, մինչդեռ միւս կողմում երկու աւա-զակները չնայած արդէն վիրաւորուած էին մի քանի տեղերից, բայց դեռ ընդդիմանում էին և աշխատում յարձակուել իրան՝ Բաֆրի վրայ և սրախողխող անել նրան: Եւ յարձակուել յաջողուեց մէկին, որ մի կերպ ձիուց վար ցատկելով գետնին բաղխեց հրացանը և սպրդելով իրանց շրջապատողների արանքից, թռաւ դէպի հերոսը ու դաշոյնը մերկացնելով յարձակուեց նրա վրայ. բայց Բաֆրը կարողացաւ խուսափել նրա հարուածից՝ մի րոպէ բաց թողնելով աղջկան և իր հրացանի ծանր կոթով ուժասպառ անելով նրա թևն ու գետին գլորելով: Միւս ընկերն էլ արդէն ընկել էր և հառաչում էր իրան արնաքամ, ուժա-սպառ անող բազմաթիւ վէրքերից: Խումբը, արեան ծարաւի խումբը կրկին թափուեց այս՝ Բաֆրի հար-ւածից գետին տապալուածի վրայ և մի քանի գնդակներ տեղնուտեղը ընկած թողին անիրաւին:

Սուլօն դեռ ևս թաւալում էր ճչալով ու խըր-խռացնելով: Յանկարծ սրարշաւ երևեցաւ իր երկու սորադրեաների հետ և ինքը՝ ծերունի Ահմեդ-ա-ղան, որին ևս ուշ էր հասել իր աղջկայ գլխին եկած փորձութեան լուրը, որից յետոյ նա կորիւնը կորցրած առիւծի նման կրակ կտրած աճապարել էր այստեղ — կռուի դաշտը հասնելու և իր վրէժը լուծելու չարագործից:

Նա նկատելով արեան մէջ դեռ ևս թաւալող Սուլթին, մոլեգնաբար յարձակւեց և ահա մի գնդակի հարւած ևս, և չարագործը տեղնուտեղը մեռած մնաց: Ամէն բան վերջացաւ: Երեքն էլ արդէն մնացել էին իրանց արիւնից գոյացած ադմի մէջ:

Ահմեդ-աղան նոր միայն՝ վրիժուց ծարաւն յագեցրած՝ յուշ բերեց իր աղջկան, ձիուց վայր թռաւ՝ համարեա անգիտակցաբար խլեց նրան Բափիրի գրկից ու սկսեց մոլեգնաբար համբուրել գգւել... բայց աղջիկը դեռ անզգայ էր:

Հայրը գլուխը կորցրած սկսեց աղաղակել, ողբալ և գլխին տալով վա՜յ կանչել, կարծելով թէ իր միակ յոյսն ու աղաւնին արդէն ձեռքից գնացել էր: Եւ մինչդեռ բոլոր ներկայ եղողները այլևս շւարած մնացել էին կանգնած, Բափիրը սկսեց յուսադրել նրան և հանգստացնել ասելով.

— Հայրի՛կ, ժամանակ չէ ողբալու, ուշքի եկէք, հանդարտեցէք և օգնէք ինձ ուշքի բերելու խեղճին. դա միայն ուշաթափւած է:

Ահմեդ-աղան չռեց աչքերը Բափիրի վրայ և լաւ զննելուց յետոյ՝ կարծես նոր միայն ճանաչելով նրան՝ մրմնջաց,

— Ա՜հ, այդ դո՞ւ ես, Բափիր... դէ՜հ, փրկիր աղջկաս, ազատի՛ր նրան...

— Հանգստացէք, աղա՛, նա արդէն փրկւած է և ազատ.

Ասաց Բափիրը և կրկին մօտենալով նրանց, անձնատուր եղաւ աղջկան ուշքի բերելու միջոցներին: Երիտասարդներից մէկը շտապով կարողացաւ մօտերքում ջուր գտնել և իր քօլօզի (թասակի) մէջ բերելով սրսկեց աղջկայ դէմքին:

— Ա՜խ... մի թոյլ հառաչ դուրս եկաւ Մեհրիի կրծքից, երբ արդէն բաւականաչափ տրորելուց յետոյ նրան ուշքի էին բերել:

Նա բացեց աչքերը և մի թափանցիկ հայեացքով չափելով ու զննելով իր շուրջը՝ թեթևակի ցնցւեց և կրկին փակելով թերթերունքները շշնջաց.

— Հայրի՛կ... Բա՛փիր... այս ո՞րտեղ ենք, ես վախենումեմ...

— Մեզ մօտ, աղջիկս, մի վախիր, արխայի՛ր...

— Քո Բափիրի մօտ, հոգի՛ս, վեր կաց, սթափւիր:

Եւ հազիւ աղան աւարտել էր իր խօսքը, որ Մեհրին ծիգ թափելով բարձրացաւ, ընկաւ նրա վզովը և շշնջաց. «Ա՜խ [illegible]...» և ապա մի վայրկեան լռութիւնից յետոյ յետ ընկաւ, չռած աչքերով նայեց հօրը և կրկին շշնջաց՝ յենւելով Բափիրի կրծքին.

— Հայրիկ, ազատի՛ր ինձ վերջապէս:

— Դու արդէն ազատ ես.— խօսեց հայրը առանց ճշտութեամբ ըմբռնած լինելու այդ երկդիմի

խօսքերի նշանակութիւնը, և մտածմունքի մէջ ընկաւ. — չը լինի թէ ցնորումէ. — շշնջաց ինքն իրան:

— Հայրի՛կ, թոյլ տուէք ինձ նրա ձեռքը խնդրել ձեր հայրական օրհնութեամբ հանդերձ և նրա պատուութիւնն ու բախտաւորութիւնը ապահովւած կը լինի ընդ միշտ. — մէջ մտաւ Բախիրը ամօթխածութիւնից շիկնած ու այլայլւած:

— Արժանի է, Ահմեդ-աղա՛, նա ազատեց աղջիկդ. խօսեց խմբից մէկը, մինչդեռ ինքը՝ ծերունին տատանումէր պատասխանել:

— Ա՛հ, այդպէս...! Դէ՛հ, լա՛ւ, օրհնեալ լինիք, որդիքս... խօսեց վերջապէս Ահմեդ-աղան յուզւած, բայց էլ առանց տատանելու և վճռականապէս. յետոյ իր աջը պարզելով դրաւ նրանց երկուսի էլ գլխին ու աւելացրեց. — Շա՜տ ապրէք և երջանիկ եղէք. թող Աստուած Ինքն էլ օրհնէ ձեր ծնունդը և ձեր ապագան... Բախիր, այժմ՝ տեսնում եմ, թէ ինչքան ազնիւ արիւն է հոսում քո երակներում, այո, զուտ քրդական արիւն...! Դու արժանի ես քո ցանկութեան համաձայն վարձատրւելու, որովհետև դու կարողացար պաշտպանել քո ցեղի Թամիրը... օրհնեալ լինիս, քա՜չ աշի՛ր...

— Ամէ՛ն, ամէ՜ն... գոռաց քրդերի ամբողջ խումբը, որ հետզհետէ աւելի ստուարացել էր յետևից

հարսի եկողներով. — կեցցէ՜ երջանիկ և ազնիւ զոյգը. կեցցէ՜ Բախիրը և Ահմեդ աղան:

Մի րոպէ հազիւ անցաւ և ահա խումբը ուրախութեան աղաղակներով գնաց դէպի գիւղը՝ վճռելով շատ շուտով տօնել այդ երջանիկ զոյգի հարսանեաց հանդէսը, տխրութեան ամպը փարատւած էր:

Այլ ևս կատարելապէս երջանիկ էր զգում իրան ծերունի Ահմեդ-աղան, իսկ Բախիրն ու Մեհրին իրանց երևակայութեամբ արդէն եօթն'րորդ երկնքումն էին գտնւում:

⁂

Անցան ուրախութեան օրերը:

Այժմ ընդ միշտ ապահովւած էր Բախիրի ու Մեհրիի երջանկութիւնը: Նրանք այժմ կատարեալ երջանիկ և տիպար ամուսիններ էին: Բայց այն օրից, որ դրանց երջանկութեան համար արիւն թափւեցաւ, այն օրից արդէն երկու քիւրդ ցեղերի մէջ անհաշտ թշնամութեան սերմը ցրւեցաւ:

Սուլթի ցեղը լցուեցաւ վրէժխնդրութեան անյաղ ծարաւով։ Բսակ-Քսակն *) սկսուեց։

Քիւրդերի համար հէշտ է միթէ մի անգամից երեք մարդ, այն էլ Սուլթի և նրա ընկերների պէս մարդկանց կորցնել...

Այդպիսի անարգանք նրանք չէին կարող տանել։ — Արեան խնդիր կար. իսկ քիւրդը ինչպէս պատուի, այնպէս էլ արեան վրէժը արիւնով միայն լուծել գիտէ։

*) Բսակ-բսակ — այն արեան վրէժխնդրութիւնը, որ ժառանգաբար, որդից-որդի մնում է երկու ցեղերի կամ ընտանիքների մէջ։

Ծ. Հեղ.

a054